

նմա իշխանութիւն վարդապետութեան, զոր ոչ հաւանեալ զվեհն՝ ասելով թէ Տղայ է եւ նոր արեղայ. երթեալ էջմիածինն ուսցի զկատարելութիւն ուսման, եւ ի դէպ ժամանակի կատարեսցի խնդիր ձեր: Բայց իբրեւ եկն համբաւ նզովից նոցին որ ի քէն՝ վարեաց եւ աքսորեաց յինքենէ, եւ այժմ բնակի մերձ ի Նիկոմիդայ Արմաշու վանք կոչեցեալ՝ առ Մարկոս եպիսկոպոսն: Յայսմ պատճառէ այսքան չարիք գործեցին՝ հրապարակաւ գոչելով զարարս իւրեանց մեծաւ անզգամութեամբ»⁽¹⁾:

Յակոբ կաթողիկոսի վրայ յօրինած Ողբին մէջ Երեմիա ինք ալ կը պատմէ այս դէպքը, բայց ո՛չ իրեն և ո՛չ իր քահանայ հօր որեւէ գեր չի վերագրեր այս մասին: Հայրապետի վախճանէն ետք, կը գրէ, ի պատիւ անոր հանգստեան՝ երեք տեղ գերեզման կը փորեն: Թէև շատ վէճեր տեղի կ'ունենան թէ ատոնցմէ որո՞ւն մէջ իջեցնեն, բայց երբ վերահասու կ'ըլլան թէ հոգեորտէրը փափաքած է որ Պէկողլի թաղուի՝ այն ատեն առօք փառօք հոն կը տանին զայն⁽²⁾:

Մենք աւելի հակամէտ ենք Երեմիայի գրածին հաւատք ընծայելու քան յիշեալ երկու վարդապետներու՝ հայր և որդի Քէօմիւրձեաններու մասին գրածներուն, զորս կը համարենք արդիւնք անսիրելութեան ու հակակիր զգացումներու⁽³⁾:

Այսուհետեւ Երեմիայի կեանքին վերաբերեալ կարգ մը մանրամասնութիւններ պիտի քաղենք Մինաս Ամ-

(1) Օրինակ կոնդակաց եւ նամակաց Եղիազար կաթողիկոսի, Զեռ. Թիւ 186, թղ. 59բ: Նամակիս վերնագիրն է. «Այս գիրս յաղագս Յակոբ կաթողիկոսի առ Աստուած փոխելոյն առաքեալ եղեւ առ Եղիազար կաթողիկոս»:

(2) Հ. Ն. Ակինեան, Զէլէպի, էջ 210, տողք 11-14:

(3) Առ Եղիազար կաթողիկոս ուղղեալ այս նամակի մասին տե՛ս մեր յօդուածը, Տանար, 1912, էջ 369-371: